Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշմամբ հաստատված պահանջների կատարում, մասնավորապես, մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարաման կոմիտեին ի տնօրինություն հանձնելու աշխատանքների իրականացում.

բ) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N 1171-Ա որոշմամբ հաստատված պահանջների կատարում, մասնավորապես, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքերը վարձակալության իրավունքով տրամադրելու աշխատանքների իրականացում:

գ) Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքների, անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացում,

դ) Ենթակառուցվածքների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրաֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն) վերաբերյալ համապատասխան տեղեկությունների կազմում.

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ 6 (վեց) ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ ***295000 (երկու հարյուր իննսունհինգ հազար*)** **ՀՀ դրամ:**

Փորձագետի պարտականությունները՝

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. Սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. Պահպանել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ
3) Հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ
4) Քաղաքաշինության ոլորտի իրավական ակտերի իմացություն
5) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
6) Ռուսերեն կամ անգլերեն լեզուներին տիրապետում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում **(դիմումի ձևը կցվում է).**
- Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).

- Աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- Արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- Մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- Անձնագիր կամ նույնականացման քարտ.
- Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- Ինքնակենսագրություն.
- Հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է):**

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- հարցազրույց:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ **անձամբ:**

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 03.03.2026թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, 14.00-ից 15.00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

ՀՀ քաղաքացիները տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, էլ. փոստ՝ gegharkunik.andznakazm@mta.gov.am, հեռ.՝ 060650626:

26.02.2026թ